Արման Հակոբյան

Ծնվել է 1965թ. սեպտեմբերի 30-ին, Երևանում:

Կրթություն՝

1988թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժինը՝ 1986-1987թթ. ուսանելով Ամմանի համալսարանում (Հորդանան),

1991թ. ավարտել է ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան:

Աշխատանքային գործունեություն՝

1989-1991թթ.	ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ լաբորանտ,
1991-1992թթ.	ՀՀ ԱԳՆ Մերձավոր արևելքի բաժնի երրորդ քարտուղար,
1992-1995թթ.	Եգիպտոսում ՀՀ դեսպանության երկրորդ քարտուղար,
1995-1997թթ.	ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության արաբական երկրների և Իսրայելի բաժնի առաջին քարտուղար,
1997-1999թթ.	ՀՀ ԱԳՆ Մերձավոր Արևելքի վարչության պետ,
1999-2002թթ.	ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության խորհրդական (Նյու Յորք),
2002թ.	Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում ՀՀ ԱԳՆ լիազոր ներկայացուցիչ, արտաքին հարաբերությունների վարչության պետ,
2002-2006թթ.	ՀՀ ԱԳՆ սպառազինությունների վերահսկման և միջազգային անվտանգության վարչության պետ,
2006-2011թթ.	Կանադայում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, Կանադայում ՀՀ գործերի հավատարմատար,
2011-2020թթ.	ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ,
2020-2021թթ.	Բրազիլիայում, Կոլումբիայում և Բոլիվիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Դիվանագիտական աստիճան՝

արտակարգ և լիազոր դեսպան:

Գիտական եվ դասախոսական գործունեություն՝

Բանասիրական գիտությունների թեկնածու (սեմական բանասիրություն):

1991 թվականից դասավանդել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում (արաբերեն, եբրայերեն, դասական ասորերեն, եբրայագիտություն, արամեագիտություն, ասորագիտություն):

Հիմնական հրապարակումներ՝

- «Արդի եբրայերեն» (Երևան, 2003, 2019),
- «Դասական ասորերեն» (Երևան, 2005, ռուսերեն թարգմանությունը՝ Классический сирийский язык, Մոսկվա, 2010, անգլերեն թարգմանությունը՝ Classical Syriac, ԱՄՆ, 2019),
- «Արամեագիտության և ասորագիտության ներածություն» (Երևան, 2015, անգլերեն թարգմանությունը՝ Introduction to Aramean and Syriac Studies, ԱՄՆ, 2017),
- «Հիսուսի և դևերի արամեերեն» (Երևան, 2021):

Օտար լեզուներ՝

անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն, եբրայերեն, պորտուգալերեն, լատիներեն:

Ընտանեկան կարգավիճակ՝

ամուսնացած է, ունի երկու դուստր: